# Վարժական հավաքներ հայտարարելու մասին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2020 թվականի N  - Ն

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով` Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ  է.

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շար-քային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ` երեք ամիս ժամկետով` 2020 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը:
2. Վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղա-քացիների`

1) ռազմական ունակությունների կատարելագործման,

2) մասնագիտական վերապատրաստման,

3) մասնագիտական պատրաստման,

4) բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպա-ների պատրաստման նպատակով:

3. Վարժական հավաքներին ներգրավվել ընդհանուր թվով 786 քաղաքացու, որոնցից 524–ը` շարքային կազմի, 82-ը` ենթասպայական կազմի, 180-ը` սպայական կազմի պահեստազորայիններ:
4. Սահմանել, որ վարժական հավաքներին ներգրավվում են.

1) մոտոհրաձգային մասնագիտություններով` 36 պահեստազորային` 2020 թվականի սեպտեմբերի 15 - 24-ը ներառյալ, 18 պահեստազորային` 2020 թվականի հոկտեմբերի 1 - 10-ը ներառյալ, 18 պահեստազորային` 2020 թվականի հոկտեմբերի 6 - 15-ը ներառյալ, 18 պահեստազորային` 2020 թվականի հոկտեմբերի 20 - 29-ը ներառյալ, 21 պահեստազորային` 2020 թվականի նոյեմբերի 16 - 25-ը ներառյալ,

2) հրթիռա-հրետանային մասնագիտություններով՝ 31 պահեստազորային՝ 2020 թվականի հոկտեմբերի 19 - 28-ը ներառյալ, 132 պահեստազորային՝ 2020 թվականի նոյեմբերի 3 - 12-ը ներառյալ, 145 պահեստազորային՝ 2020 թվականի նոյեմբերի 9 - 18-ը ներառյալ,

3) հակաօդային պաշտպանության մասնագիտություններով՝ 5 պահեստազորային՝ 2020 թվականի հոկտեմբերի 12 - 21-ը ներառյալ, 8 պահեստազորային՝ 2020 թվականի նոյեմբերի 23 - 29-ը ներառյալ,

4) կապի մասնագիտություններով՝ 71 պահեստազորային՝ 2020 թվականի նոյեմբերի 20- 29-ը ներառյալ,

5) հետախուզական մասնագիտություններով՝ 6 պահեստազորային՝ 2020 թվականի սեպտեմբերի 15 - 24-ը ներառյալ, 14 պահեստազորային՝ 2020 թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 4-ը ներառյալ, 57 պահեստազորային՝ 2020 թվականի հոկտեմբերի 20 - 29-ը ներառյալ, 72 պահեստազորային՝ 2020 թվականի նոյեմբերի 17 - 26-ը ներառյալ,

6) ռադիոէլեկտրոնային պայքարի մասնագիտություններով՝ 14 պահեստազորային՝ 2020 թվականի սեպտեմբերի 23 - 29-ը ներառյալ,

7) ինժեներական մասնագիտություններով՝ 24 պահեստազորային՝ 2020 թվականի հոկտեմբերի 26-ից նոյեմբերի 1-ը ներառյալ,

8) տեխնիկական մասնագիտություններով՝ 27 պահեստազորային՝ 2020 թվականի սեպտեմբերի 22 - 28-ը ներառյալ, 40 պահեստազորային՝ 2020 թվականի սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 5-ը ներառյալ,

9) թիկունքային մասնագիտություններով՝ 22 պահեստազորային՝ 2020 թվականի հոկտեմբերի 5 - 11-ը ներառյալ ներառյալ,

10) տեղագրական մասնագիտություններով՝ 7 պահեստազորային՝ 2020 թվականի սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 7-ը ներառյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020թ.

Երևան